ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 98-րդ և 99-րդ հոդվածները, Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Անկախության մասին հռչակագրի անժամանցելի արդիականության մասին» Ազգային ժողովի հայտարարության նախագիծը՝ այն սահմանված կարգով շրջանառության մեջ դնելու նպատակով:

Կից ներկայացնում ենք հայտարարության նախագիծը (հիմնական զեկուցող Գեղամ Մանուկյան, դրա հիմնավորումը, ինչպես նաև «Հայաստան» խմբակցության որոշումը (նիստի արձանագրությունից քաղվածքը):

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

11.10.2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ԱՆԺԱՄԱՆՑԵԼԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Քաղվածք խմբակցության նիստի արձանագրությունից)

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 98-րդ հոդվածով և 99-րդ հոդվածով,

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Հավանություն տալ «Հայաստանի Անկախության մասին հռչակագրի անժամանցելի արդիականության մասին» «Հայաստան» խմբակցության կողմից ներկայացվող Ազգային ժողովի հայտարարության նախագծին (կցվում է) և այն սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հայտարարության նախագծով հիմնական զեկուցողը «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանն է:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

11.10.2024թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ԱՆԺԱՄԱՆՑԵԼԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 98-րդ հոդվածով և 99-րդ հոդվածով,

Գնահատելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի բացառիկ դերը հայոց պետականության կայացման, Հայ ժողովրդի համազգային նպատակների ամրագրման և Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հաստատման գործում,

Վերահաստատելով, որ Հայաստանի անկախության հռչակագիրը հետևողականորեն համակարգված, պատմական, իրավական և տրամաբանական խոր ընդհանրացումներ բովանդակող, ազգային ինքնության առաջնահերթությունները հաշվի առնող, միջազգային սահմանադրաիրավական զարգացումների ընդհանուր տրամաբանությունից բխող նորմերի ու սկզբունքների համակարգային ամբողջականություն է՝ հիմնված մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքների և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի, ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի վրա,

Հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի պետականակերտ ինքնավար և անփոփոխելի բնույթը,

Հաշվի առնելով Հայաստանի անկախության հռչակագրի թերարժեվորման, ստորադասման և աղճատման փորձերը՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

1. Անընդունելի է համարում Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագիրը, դրանում ամրագրված հայոց պետականության

հիմնարար սկզբունքներն ու համազգային նպատակները նսեմացնելուն ուղղված ցանկացած փորձ, այդ թվում՝ քաղաքական նպատակահարմարությունից ելնելով:

2. Դատապարտում է Հայաստանի անկախության մասին հռչակագիրը ստորադասելու, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հետ արհեստական հակադրումների գործողությունները:

3. Հայաստանի անկախության մասին հռչակագրով ամրագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքներն ու համազգային նպատակները գնահատում է որպես հայ ժողովրդի անվտանգության համակարգի ապահովման անժամանցելի հիմք, որի դեմ ուղղված ցանկացած ոտնձգություն՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հանդեպ առանձնապես ծանր հանցագործություն է:

Հիմնավորում

Հայտարարության ընդունման անհրաժեշտությունը բխում է հայ ժողովրդի անվտանգության և հայոց պետականության ամրապնդման հրամայականից: